

Այն օրը որ օգտակար բանի մը կը ձեռնարկէք և շարունակական կրկնութիւնով, յարատեւութեամբ և սովորութիւնով իրական և լաւագոյն ձեռննաստութեան մը կը տիրանաք, այլևս կրնաք վստահ ըլլալ թէ անպատճառ պիտի յաջողիք, որովհետեւ մարդկութիւնը պէտք պիտի ունենայ ձեզի, ինչ որ ալ ըլլայ ձեր ընտրած աշխատանքն ու գործը. ասիկա թուարանական ճշմարտութիւն մըն է:


Եզրակացնենք:

Դուք որ այս տողերը կը կարդաք, տասն անգամ աւելի արժէք ունիք, քան այժմու Դուք ձեր մէջ թաքուն ունիք ժառանգութիւն մը թանկագին ընդունակութիւններու, որոնք ատողութեան և յաջողութեան սերմեր են Աճեցուցէ՛ք և բազմացուցէ՛ք զանոնք, վերակրթելով ձեր անձը: Կնոջնե՛ր, եթէ ձեր գաւակներուն կիրարկէք մարդկային մշակութիւն տուեալները, տեւական դրամագլուխ մը տրուած կ'ըլլաք անոնց: Բայց իրապէս երջանիկ ըլլալու համար, չի բաւեր ֆիզիքական հանգստութիւն և նիւթական բարեկեցութիւն ձեռք բերել: Պէտք է ունենալ նաև քիչ մը խտէալ, որովհետեւ երջանկութիւնը չի կրնար ըմբռնել առանց զեղեցիկին, արդարին և ճշմարտին հայեցումին: Զանց մի առնէք ուրեմն ձեր գաւակներուն ճաշակի զարդացումը: Զկայ երջանկութիւն առանց հիացումի, առանց ուզեւորութեան և կանքի առաջին տարիներէն սկսած, ձեր գաւակներուն մէջ զարդացուցէք զեղարուեստական հոգի մը, որպէս զի երբ մեծանն, գիտնան իրենց կեանքը գեղարուեստական կերտուած մը դարձնել:

(Յաջորդով՝ «Մարդասպան լայնադիքը կամ պնդութեան մասին»)

Ամբոսեց՝ ԲԺ. 1. Գ.

ՏՈՒՐԹ. ՎԻՐԹՈՐ ՓՈՇԷ



ԲԻՇԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ, ՇԻՆ ՕՐԵՐԵՆ ՄԻՋԵԻ ԺԸ. ԴԱՐԸ. ԳՐԵՅ՝ ՊՐՕՑ. Լ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ, ԵՐԵՒԱՆԻ ԲԺԿԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԵՆ: ՀՐԱՏ. ՇԵՂԻՆԱԿԻՆ, ԵՐԵՒԱՆ, 1928. 240 ԷՋ, ԳԻՆ՝ 3 ՐՈՒՊԼԷ:

Երևանի Բժշկական Համալսարանի պրոֆ. Լ. Յովհաննիսեանի այս 240 էջոց խոշոր ու մանրակրկիտ աշխատութիւնը, գրուած ռուսերէն լեզուով, կը պարունակէ իր մէջ, հին դարերէն սկսած մինչև տասնութերորդ դարը, հայ բժշկական գրականութեան մնացորդներու ամփոփումը, ինչպէս և Հայաստանի բժշկական հիմնարկութիւններու պատմութիւնը:



Հիմնուելով հին աւանդութիւններու և ոսկեդարեան գրականութեան տուեալներուն վրայ, հեղինակը կը հաստատէ որ Հայաստանի մէջ բժշկութիւնը մուտք գտած է Յունաստանէն. ինչ որ կը հաստատուի նոյնպէս յոյն բժշկական գրուածքներու հայերէն թարգմանութիւններով: Բայց Միջին դարու սկիզբները, յունական քաղաքակրթութեան տկարանալուն պատճառաւ, արաբական ազդեցութիւնը կը բռնէ անոր տեղը և կը տեսէ գրեթէ մինչև 17-18 դարերը:

Բուն հայկական բժշկական աշխատութիւններու շարքին՝ հեղինակը տարեգրական կարգով կը յիշէ գրեթէ բոլոր հայ հեղինակներու անունները որոնց ձեռագիրները անցած են մեր ձեռքը և մասնաւորապէս կը շնչտէ Գրիգոր Մագիստրոսի, Ներսէս Լամբրոնացիի, Մխիթար Հերացիի, Մխիթար Գօշի, Ժե. դարուն մէջ՝ Ամիրտովլաթի, ԺՁ. դարուն՝ Ասար և Բունեսաթ Սեբաստացիներու մասին:

Միայն տասն և ութերորդ դարուն է որ հայկական բժշկութիւնը կ'ազատի արաբականին կրկնութիւնը ըլլալէն և այդ շրջանին մէջ ուշագրութիւն կը գրաւեն Մանուկ Պանցայի, բժիշկ Սալատուրի (Երզրուպցի) եւայլն, բժշկական աշխատութիւնները:

Վերջապէս այդ պատմական շարքը կը վերջանայ եւրոպական համալսարանները աւարտած բժիշկներու ցանկով, որոնց մէջ առաջնակարգ տեղ կը բռնեն Պետրոս Քալանթարեան, Հերմիթեան, Օգուլուխեան, Ռէսթէն և սուլթաններու պալատական բժիշկ Շաշեան:

Գլուխ մը նուիրուած է Ժէ. դարուն մէջ թանկարժէք քարերու բժշկական ազդեցութեան մասին տիրող հայեացքներու ուսումնասիրութեան (ըստ պրօֆ. Պատկանեանի աշխատութեան) և գլուխ մըն ալ հայ բժշկական գրուածքներու լեզուի ուսումնասիրութեան:

Հեղինակը օգտագործած է այն բոլոր ձեռագիրները, որոնք կը գտնուին Էջմիածնի և Երեւանի Պետական Մատենադարաններուն մէջ. նաեւ հայկական և եւրոպական նորագոյն բոլոր աշխատութիւնները: Իր երկարատեւ ու բարեխիղճ ջանքերուն շնորհիւ, յաջողած է մեզ տալ կենդանի պատկեր մը անցեակի մէջ հայկական բժշկութեան: Հեղինակին կարծիքով, «հայկական բժշկութիւնը չէ հասած ստեղծագործական բարձրութեան և ան չէ մտցուցած բժշկութեան մէջ նորութիւններ, բայց պէտք է գիտնալ որ այդպիսիները ընդհանրապէս չկային Միջին Դարու ընթացքին: Այսուհանդերձ մի քանի բժշկական աշխատութիւններ, ինչպէս Ամիրտովլաթինը, Իրենց արժէքով ու լրջութեամբ, կարող են յաջողութեամբ մրցիլ շատ մը արաբական գրուածքներու հետ, որոնք համբաւ կը վայելէն բժշկութեան պատմութեան մէջ, որպէս արժէքաւոր հաւաքածոներ (էջ 215):»

ԲԺ. Ե. ՄԻՆԱՍԵԱՆ